ՆՐԱՆՔ՝ ԵՐԿՐԻ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

Նրանք ծնում են, որ արդարացնեն
մահկանացուների գոյութիւնը
Նրանք ծնում են, որ իմաստաւորեն հայրենիքի
գաղափարը
Նրանք ծնում են, որ հաստատեն ժողովրդի
արժանապատուութեան զգացումը
Նրանք ծնում են, որ պաշտպանեն ազգի
պատիւն ու ապահովութիւնը
Նրանք ծնում են, որ քաղաքական խաղերի ու
դաւերի դէմ հաստատեն ուժի եւ
ըմբոստութեան օրէնքը:

Նրանք դժուար են ծնում, որովհետեւ ծնում են ազգի հաւաքական ուժից, բարոյականութիւնից, բնազդից, ոգուց: Դժուար են ծնում, որովհետեւ իրենք աստուածներ են, որ ծնում են մահկանացուներից: Այն մահկանացուների հաւաքականութիւնից, որը չի սպառուել, չի մեռել, չի կորցրել ինքնահաստատման յարատեւ կռուի կամքը: Նրանք չլինէին, մենք չէինք լինելու: Նրանք հաւերժի ճամփորդներն են, որ լաւայի պէս ժայթքում են ազգի խռովուած արգանդից ու իրենց տաք գրկի մէջ առած հայրենիքը, պաշտպանում են ընբան սեփական մարմնով:

Նրանք ճանաչել են գոյատեւման պայման-բանաձեւերը եւ միայն իրենց համար ոչինչ չեն արել ու ոչինչ չեն յայտնագործել: Որովհետեւ նրանք անձնուրաց, անկաշառ, անշահախնդիր աստուածներ են՝ Երկրի աստուածները: Հաւերժի ճամփեքով Երկրի Աստուածները գալիս հաւասարում են մեզ, մեզնից առաջ են անցնում ու ոտնահետքերը խոտերի, ջրերի, ամպերի վրա թողնելով՝ հեռանում են դէպի հաւերժութիւն: Երկրի ամենահանճարեղ, ամենաանկաշառ, ամենանուիրուած, ամենաըմբոստ, ամենափխրուն, ամենաշարաճճի երեխեքը խոտերի, ջրերի, ամպերի վրայ յայտնաբերում են աստուածների հետքերը եւ հիւանդանում են աստուածային հիւանդութեամբ: Նրանք թողնում են խաղերը, հագնում են սաղաւարտները, վերցնում են զէնքերը ու հաւերժի ճամփեն բռնած գնում են երկրի աստուածների հետքերով...

Մայիսի 24ին ազերիները հարձակուեցին Շահումեանի շրջանի Հայ Բորիս գիւղի վրայ, փորձելով առեւանգել գիւղի հոտը: Մի խումբ երիտասարդներ, որ փորձել էին արգելք հանդիսանալ, դէմ առ դէմ են յայտնուել ՕՄՕՆականներին եւ Խորհրդային զօրքին: Ցուցաբերելով հայ զինուորին վայել քաջութիւն, անհաւասար մարտում նահատակուեցին մեր ժողովրդի 5 զաւակներ:

Յիշենք նրանց անունները եւ հպարտութեամբ գրանցենք հայ ժողովրդի գոյատեւման պայքարի պատմութեան բոցաշունչ էջում՝

Սարգիս Մաթեւոսեան, անդամ Հ.Յ. Դաշնակցութեան

Ներսէս Բէրբէրեան, անդամ Հ.Յ.Դաշնակցութեան

Աշոտ Մէյրոյեան, անդամ Ազգային Ինքնորոշում Միաւորման

Մայիս Յովհաննիսեան, անդամ Հ.Յ. Դաշնակցութեան

Աշոտ Խաչատրեան, անդամ Հ.Յ.Դաշնակցութեան:

Սարգիս Մաթեւոսեան

Ներսէս Բէրբէրեան

Աշոտ Մէյրոյեան

Մայիս Յովհաննիսեան

Աշոտ Խաչատրեան